St Yeghiche Armenian Church Parish
Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Registered charity No. 1173403
Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԵՐԿԼԵՂՈՒ ԹԵՐԹԻԿ - SUNDAY BILLINGUAL BULLETIN

1: Today's Scripture Reading, 22nd November 2026 Bulletin 51/2026

First Sunday of Advent

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԼԻ ԿՈՂՄԷ 1 ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 1:1-10



Պօղոս, Սիղուանոս եւ Տիմոթէոս, Թեսաղոնիկեցիներու եկեղեցիին՝ Հայր Աստուծմով ու Տէր Յիսուս Քրիստոսով.

շնորհք եւ խաղաղութիւն ձեզի Աստուծմէ՝ մեր Հօրմէն, ու Տէր Յիսուս Քրիստոսէ: Ամէն ատեն շնորհակալ կ'ըլլանք Աստուծմէ՝ ձեր բոլորին համար, յիշելով ձեզ մեր աղօթքներուն մէջ, անդադար յիշելով ձեր հաւատքին գործը, սիրոյ աշխատանքը, եւ մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի յոյսին համբերութիւնը՝ Աստուծոյ ու մեր Հօր առջեւ, գիտնալով՝ սիրելի եղբայրներ՝ թէ Աստուած ընտրեց ձեզ: Որովհետեւ մեր աւետարանը քարոզուեցաւ ձեզի ո՛չ միայն խօսքով, այլ նաեւ զօրութեամբ, Սուրբ Հոգիով ու լման վստահութեամբ: Դո՛ւք ալ գիտէք թէ ի՛նչպէս կեցանք ձեր մէջ՝ ձեզի համար, եւ դուք նմանեցաք մեզի ու Տէրոջ, ընդունելով խօսքը շատ տառապանքի մէջ՝ Paul's Letter to Thessalonians Սուրբ Հոգիին ուրախութեամբ: Հետեւաբար դուք տիպար եղաք բոլոր հաւատացեալներուն՝ որ Մակեդոնիայի եւ Աքայիայի մէջ են, որովհետեւ ո՛չ միայն Մակեդոնիայի եւ Աքայիայի մէջ հռչակուեցաւ Տէրոջ խօսքը ձեզմէ, այլ նաեւ ամէն տեղ տարածուեցաւ Աստուծոյ վրայ ձեր ունեցած հաւատքը, այնպէս որ պէտք չունինք որեւէ բան խօսելու. քանի որ իրենք իրենցմէ կը պատմեն մեր մասին, թէ ինչպիսի՛ մուտք ունեցանք ձեր մէջ, եւ ի՛նչպէս դուք կուռքերէն դարձաք Աստուծոյ՝ ապրող ու ճշմարիտ Աստուծոյ ծառայելու համար, եւ երկինքէն սպասելու անոր Որդիին՝ որ ինք մեռելներէն յարուցանեց, այսինքն Յիսուսի, որ կ'ազատէ մեզ գալիք բարկութենէն:

The Epistle of St Paul's Letter to the 1 Thessalonians 1:1-10;

Paul, Silas [a] and Timothy, To the church of the Thessalonians in God the Father and the Lord Jesus Christ: Grace and peace to you.

Thanksgiving for the Thessalonians' Faith

We always thank God for all of you and continually mention you in our prayers.

Church Attendance:

On Sunday 15th November 2026, 169 faithful attended our church for worship, excluding Altar Servers, Members of the Choir, Wardens and children under the age of 16. Join us at St Yeghiche Armenian Church every Sunday and bring a friend and family member.

let us pray together and strengthen our faith.

Our Aim;

St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

We remember before our God and Father your work produced by faith, your labor prompted by love, and your endurance inspired by hope in our Lord Jesus Christ.

For we know, brothers and sisters [b] loved by God, that he has chosen you, because our gospel came to you not simply with words but also with power, with the Holy Spirit and deep conviction. You know how we lived among you for your sake. You became imitators of us and of the Lord, for you welcomed the message in the midst of severe suffering with the joy given by the Holy Spirit. And so you became a model to all the believers in Macedonia and Achaia. The Lord's message rang out from you not only in Macedonia and Achaia—your faith in God has become known everywhere. Therefore we do not need to say anything about it, for they themselves report what kind of reception you gave us. They tell how you turned to God from idols to serve the living and true God, and to wait for his Son from heaven, whom he raised from the dead—Jesus, who rescues us from the coming wrath.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 12:13-31



Jesus teaching the twelve disciples

Բազմութեան մէջէն մէկը ըսաւ անոր. «Վարդապե՛տ, ըսէ՛ եղբօրս՝ որ ինծի հետ բաժնէ մեզի ինկած ժառանգութիւնը»: Ան ալ ըսաւ անոր. «Մա՛րդ, ո՞վ նշանակեց զիս իրաւարար կամ բաժնող՝ ձեր վրայ»: Ապա ըսաւ անոնց. «Ուշադի՛ր եղէք եւ զգուշացէ՛ք ագահութենէ. որովհետեւ մէկուն ստացուածքներուն առատութենէն կախուած չէ իր կեանքը»: Առակ մըն ալ խօսեցաւ անոնց՝ ըսելով. «Հարուստ մարդու մը արտերը տուին առատ բերքեր, եւ ան կը մտածէր ինքնիրեն՝ ըսելով. "Ի՞նչ ընեմ, որովհետեւ տեղ չունիմ՝ ուր բերքերս ժողվեմ": Եւ ըսաւ. "Սա՛ պիտի ընեմ. պիտի քանդեմ ամբարներս, պիտի կառուցանեմ աւելի՛ մեծերը, հոն պիտի ժողվեմ իմ բոլոր բերքերս ու բարիքներս, եւ պիտի ըսեմ անձիս. «Ո՛վ իմ անձս, շատ բարիքներ ունիս՝ դիզուած շատ տարիներու համար. հանգչէ՛, կե՛ր, խմէ՛ եւ զուարճացի՛ր»": Բայց Աստուած ըսաւ անոր. "Անմի՛տ, այս գիշեր անձդ պիտի պահանջուի քեզմէ. ուստի որո՞ւ պիտի ըլլան այդ պատրաստած բաները": Այսպէս է ան՝ որ գանձ կը դիզէ ինքնիրեն համար, բայց չի հարստանար Աստուծոյ մօտ»:

Եւ ըսաւ իր աշակերտներուն. «Ուստի կը յայտարարեմ ձեզի. "Մի՛ մտահոգուիք ձեր անձին համար՝ թէ ի՛նչ պիտի ուտէք, ո՛չ ալ մարմինին համար՝ թէ ի՛նչ պիտի հագնիք. որովհետեւ անձը կերակուրէն աւելի է, ու մարմինը՝ հագուստէն: Դիտեցէ՛ք ագռաւները, որոնք ո՛չ կը սերմանեն եւ ո՛չ կը հնձեն, որոնք ո՛չ շտեմարաններ ունին, ո՛չ ալ ամբարներ, բայց Աստուած կը կերակրէ զանոնք. դուք ո՛րչափ աւելի կ'արժէք թռչուններէն: Ձեզմէ ո՞վ կրնայ մտահոգուելով կանգո՛ւն մը աւելցնել հասակին վրայ: Հապա եթէ չէք կրնար ամենափոքր բանը փոխել, ինչո՞ւ կը մտահոգուիք ուրիշ բաներու համար: Դիտեցէ՛ք շուշանները, թէ ի՛նչպէս կ'աճին: Ո՛չ կ'աշխատին եւ ո՛չ կը մանեն. բայց կը յայտարարեմ ձեզի թէ Սողոմոն ալ՝ իր ամբողջ փառաւորութեան մէջ՝ չհագուեցաւ անոնցմէ մէկուն պէս: Ուստի եթէ խոտը, որ այսօր դաշտի մէջ է ու վաղը փուռը պիտի նետուի, Աստուած ա՛յդպէս կը հագուեցնէ, ո՛րչափ աւելի ձե՛զ, թերահաւատնե՛ր: Մ՛ի դուք մի՛ փնտռէք թէ ի՛նչ պիտի ուտէք եւ ի՛նչ պիտի խմէք, ու մի՛ շփոթիք. որովհետեւ աշխարհի ազգե՛րը կը փնտռեն այդ բոլոր բաները, եւ ձեր Հայրը գիտէ թէ ասոնք պէտք են ձեզի: Հապա դուք խնդրեցէ՛ք Աստուծոյ թագաւորութիւնը, ու այդ բոլոր բաներն ալ պիտի տրուին ձեզի"»:

Dear Parishioners and Armenian Community Members:
The Sunday collection plate circulating during Divine Liturgy is for all to contribute each Sunday in order to have a thriving church. Our Lord Jesus Christ told us in Matthew 17:24-27. Your dona-tion, participation and support is vital, not only by attending the church but also with your time and financial contribution to our church. Please be generous and help to keep the doors of the St Yeghiche Armenian Church open and provide all the services.

The Holy Gospel of Jesus Christ according to Luke 12:13-31

for the Holy Spirit will teach you at that time what you should say."

The Parable of the Rich Fool

Someone in the crowd said to him, "Teacher, tell my brother to divide the inheritance with me." Jesus replied, "Man, who appointed me a judge or an arbiter between you?" Then he said to them, "Watch out! Be on your guard against all kinds of greed; life does not consist in an abundance of possessions."

And he told them this parable: "The ground of a certain rich man yielded an abundant harvest. He thought to himself, 'What shall I do? I have no place to store my crops.'

"Then he said, 'This is what I'll do. I will tear down my barns and build bigger ones, and there I will store my surplus grain. And I'll say to myself, "You have plenty of grain laid up for many years. Take life easy; eat, drink and be merry." '

"But God said to him, 'You fool! This very night your life will be demanded from you. Then who will get what you have prepared for yourself?'

"This is how it will be with whoever stores up things for themselves but is not rich toward God."

Do Not Worry

Then Jesus said to his disciples: "Therefore I tell you, do not worry about your life, what you will eat; or about your body, what you will wear. For life is more than food, and the body more than clothes. Consider the ravens: They do not sow or reap, they have no storeroom or barn; yet God feeds them. And how much more valuable you are than birds! Who of you by worrying can add a single hour to your life [b] ? Since you cannot do this very little thing, why do you worry about the rest?

"Consider how the wild flowers grow. They do not labor or spin. Yet I tell you, not even Solomon in all his splendor was dressed like one of these. If that is how God clothes the grass of the field, which is here today, and tomorrow is thrown into the fire, how much more will he clothe you—you of little faith! And do not set your heart on what you will eat or drink; do not worry about it. For the pagan world runs after all such things, and your Father knows that you need them. But seek his kingdom, and these things will be given to you as well.

ՏՈՆ ԵՐԵՔԱՄՅԱ Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՏԱՃԱՐԻ ԸՆԾԱՅՄԱՆ

Ս. Կույս Մարիամին նվիրված տոներից է Երեքամյա Ս. Աստվածածնի տաճարին ընծայման տոնը, որ բոլոր քրիստոնեական եկեղեցիները ոգեկոչում են նոյեմբերի 21-ին: Ըստ ավանդության՝ երեք տարին լրանալուց հետո, Տիրամոր աստվածավախ ու բարեպաշտ ծնողները՝ Հովակիմն ու Աննան, իրենց ուխտի համաձայն, Մարիամին ընծայում են տաճարին, ուր նա մնում է մինչև նշանվելը:

Տոնի հաստատումն առնչվում է այն տաճարի հետ, որ կառուցել է Հուստինիանոս կայսրն Աստվածածնի պատվին հին հրեական տաճարի տեղը, Մորիա բլրի վրա: Տաճարի նավակատիքը տեղի է ունեցել 543 թվականին նոյեմբերի 21-ին: 638 թվականին հետո, երբ Հուստինիանոսի կառուցած տաճարը վերածվում է մուսուլմանական մզկիթի, տոնակատարությունը տարածվում է ողջ քրիստոնյա աշխարհով մեկ: Աստվածածնի ընծայման տոնը Հայ Եկեղեցի մուտք է գործել ԺԸ դարում: Երեքամյա Ս. Աստվածածնի՝ տաճարին ընծայման տոնը Հայ Առաքելական Եկեղեցու անշարժ տոներից է:

PRESENTATION OF THREE-YEAR-OLD ST. MARY TO THE CHURCH

One of the feasts dedicated to the Holy Virgin is the presentation of three-year-old Mary (Holy Mother of God) to the temple. All Christian Churches celebrate this feast of November 21.
According to the Holy Tradition of the Church, after Mary's becoming three-year-old, the parents of the Holy Virgin, Jehoiakim and Anna, fulfilling their promise, bring Mary to the Temple and present her to God. Mary remains in the Church till her engagement. Establishment of the feast is related to the Cathedral, which was built by the King Justinianos in

honor of St. Mary, the Holy Mother of God, in the place of the old Jewish temple, on the hill Moria. The cathedral had been consecrated on November 21, 543 AD.

After 638 AD, when the Cathedral, built by the King Justinianos, is converted into a Moslem temple, the celebration of the feast spreads throughout the entire Christian world. The Feast of presentation of St. Mary to the Church has been included in the Armenian Apostolic Church Calendar in the nineteenth century.

A quarter-century of faith, community, and devotion has been beautifully preserved in print titled "A LIVING TEMPLE"

To commemorate the 25th anniversary of St Yeghiche Armenian Church consecration, the newly published silver jubilee book offers parishioners and community a moving look at the parish's history.

The 136 page book "A LIVING TEMPLE" features a look back at the consecration ceremony, historical photographs of the serving clergy, parish founders, events, treasures and various activities over the 25 year period.

Copies of the book can be obtained at church following Sunday service, in exchange for a minimum donation of £10.00. Alternatively, contact the parish council by emailing info@styeghiche.org.uk

All proceeds will go directly toward the running cost of the church.



DAILY BIBLE READINGS FOR 2026 According to the Lectionary of the Armenian Apostolic Church

23 November	The Holy Virgins Juliana and Basilla Song of Songs 8:14-26 [plus 6 verses in the Armenian version]; Hosea 14:6-8; 2 Corinthians 6:16-17:1; Luke 8:1-3
24 November	Sts. Lucian the Priest, Tarachus, Probus, Andronicus, and Onesimus and the other Disciples of Paul Wisdom 9:9-12; Isaiah 41:15-19; 2 Corinthians 2:14-17; Luke 6:13-20
25 November	1 Thessalonians 2:1-12; Luke 12:41-48
26 November	Sts. Clement the Patriarch and Bagarat the Bishop of Taormina Proverbs 8:33-36; Isaiah 66:18-21; Philippians 4:1-7; Luke 9:1-6
27 November	1 Thessalonians 2:17-19; Luke 12:49-59
28 November	The Holy Apostles and our First Illuminators Thaddeus and Bartholomew Wisdom 9:13-10:2; Jeremiah 16:16-19; 1 Corinthians 12:26-13:10; Matthew 9:35-10:7

St Yeghiche Armenian Church Christmas Tree

We will be erecting our Christmas tree and Nativity seen on Sunday 29th November 2026 after church service. We invite all the children in our community with their parents and our Deacons to join us and decorate our 2026 Christmas Tree. Please bring wrapped empty boxes of any size to fill under the Christmas tree. **Thank you.**



Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.

The Beauty of Priesthood



Yesterday, the Diocese of the Armenian Church of the United Kingdom and Ireland, together with the Armenian community, marked the 25th anniversary of Bishop Hovakim Manukyan's priestly ordination.

The celebration took place at The Rock, St Mark Coptic Orthodox Church, Allen Street, Kensington, London W8 6UX.

The keynote address was delivered by the Right Reverend Dr Christopher Cocksworth, Dean of Windsor, followed by remarks from HE Archbishop Angelos OBE, Coptic Orthodox Archbishop of London and Papal Legate to the United Kingdom, and the Right Reverend James Curry, Auxiliary Bishop of Westminster in the Roman Catholic Church.

HG Bishop Datev Hagobyan, Primate of the Armenian Diocese of Romania and Patriarchal Legate for the Balkan countries, was also in attendance.

Guests enjoyed a programme of Armenian vocal works performed by renowned local Armenian artists and singers.

At the conclusion, HG Reverend Bishop Hovakim Manukyan thanked those present and presented the St Yeghiche Medal of Achievement to individuals who have supported the Armenian Church in the United Kingdom.

Your Grace, may you continue to fulfil your calling with vigour.

Bishop Datev Hakobyan to Celebrate Divine Liturgy at St Yeghiche Armenian Church



At the invitation of His Grace Bishop Hovakim Manukyan, Primate of the Armenian Church in the United Kingdom and Ireland, His Grace Bishop Datev Hakobyan, Primate of the Armenian Diocese of Romania, will celebrate the Divine Liturgy (Holy Badarak) at St Yeghiche Armenian Church in South Kensington on Sunday, 22 November 2026, at 11.00 am.

Bishop Datev is visiting London to join the celebrations marking the 25th anniversary of Bishop Hovakim's priestly ordination.

About Bishop Datev Hakobyan

Bishop Datev was born in Mosul, Iraq, in 1966 and studied at the Gevorgian Theological Seminary at the Mother See of Holy Etchmiadzin. He was ordained a priest in Baghdad in 1993 and went on to serve Armenian communities in France and the Netherlands. He was elected Primate of the Armenian Diocese of Romania in 2010 and consecrated a bishop by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, in 2011. Since 2022, he has also served as Patriarchal Legate for the Balkan countries.

3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն.

«Վարդապե՛տ, ասա եղբօրս, որ ժառանգութիւնը ինձ հետ բաժանի» (Ղուկ. 12:13):

Աստծոյ Միածին Որդուն ժառանգակից եղբայրնե՛ր եւ քոյրե՛ր,

Յաճախ ուղղակի անունը պարզ յուշում է՝ ի՞նչ ազգից է մարդը, երբեմն անգամ ի՞նչ հաւատքի կրող է: Վարդան, Տիգրան, Սրբուհի, Սարգիս, Յարութիւն, Աշխէն… անունը փոքրիկ այցեքարտ է: Աշխարհ եկած ամէն մարդ իր անունով, ազգատոհմով, ինքնութեամբ պատկանելիութիւն է արտայայտում որեւէ ազգի, ժողովրդի, հանրութեան: Անցնող եւ ապագայ սերունդների մէջ կարեւոր կապող օղակ է ամէն անհատ: Մենք հաւատքային մեր պատկանելիութեամբ քրիստոնեայ ենք, ազգային մեր տեսակով՝ հայ, տոհմով՝ մեր հայրերի ու պապերի անունով, ընտանեկան առանձնայատկութեամբ՝ մեծաւ մասամբ «**եան**» վերջաւորութեամբ: Յաճախ ենք լսում «**ազգայինհոգեւոր ժառանգութիւն**» կապակցութիւնը: Որպէս կանոն՝ աւագ սերունդը ժառանգութիւն է թողնում, որը ժառանգում է իրաւայաջորդ կրտսեր սերունդը՝ արեան եւ հաւատքի իր հարազատութեան ապացոյցով: Արեան եւ հոգու հարազատութիւնն է պատճառը, որ անգամ եթէ առանց փաստաթղթի էլ լինի, առանց ժամանակակից իրաւական սահմանումների, ամէն հայ իրեն զգում է իբրեւ ժառանգորդը նիւթական եւ հոգեւոր այն ամբողջութեան, որ մեր հայրենիքն է, հաւատքը, լեզուն, մշակոյթը,պատմական յիշողութիւնը… Իսկ ի՞նչ ժառանգութիւն ենք ուզում ստանալ մենք: Ի՞նչ ժառանգութեան յոյս եւ ակնկալիք ունենք՝ անհատապէս եւ համայնօրէն: Սրա հետ ուղղակիօրէն կապուած կը լինի եւ այն, թէ ինչ ժառանգութիւն կը թողնենք մենք յետագայ սերունդներին: Աւետարանը մեզ բերում է օրինակ, թէ ինչպէս եղբայրներից մէկը դիմում է Յիսուսի միջնորդութեանը, որ միւս եղբայրը բաժանի ժառանգութիւնը: Թւում է՝ Քրիստոսից աւելի արդար դատաւոր եւ հաւասար բաժանարար չպէտք է որ գտնուէր, բայց Յիսուս բոլորովի այլ պատասխան է տալիս «*Ո՛վ մարդ, ինձ ո՞վ դատաւոր կամ բաժանարար կարգեց ձեզ վրայ*» եւ այս առիթն օգտագործեց խօսելու նիւթական հարստութեանը հոգով կապուելու մասին:

Այժմ էլ երբ ժառանգութեան մասին խօսք է լինում, մարդկանց միտքն առաջինը դրամի եւ ունեցուածքի կողմն է: Մենք էլ ներքուստ գուցէ նեղսրտում ենք, որ նախորդ սերունդներից ժառանգութիւնը այս ներկայ սերնդին այնքան էլ համաչափ եւ արդար չի բաշխուել. որոշ քիչ թուով մարդիկ դժուարանում են յիշել իրենց պատկանող սեփականութիւնների քանակը, իսկ դեռ միլիոնաւոր մարդի «զհաց մեր հանապազորդ»-ը ձեռք բերելու խնդիր ունեն: Եւ յաճախ է պատահում, որ այսօրուայ մարդն էլ վերը յիշուած եղբօր պէս դիմի Աստծուն՝ մարդկութեան ունեցուածքը բաժանելու համար:

Յիսուսի պատասխանը ժխտական է ոչ այն պատճառով, որ միայն հոգեւոր հարցերով է Աստուած զբաղուած (յիշենք Յիսուսի ձեռամբ հացի բազմացումները 5000-ին եւ 4000-ին կերակրելու համար), այլ որ Աստծոյ համար տեղ չի մնում այն մարդու ներսում, ում միտքն ու հոգին միայն նիւթականով են զբաղուած, ում համար Աստծուն դիմելը միայն դրամի համար է: Սա աւելի բացատրելի է դառնում Քրիստոսի յաջորդիւ բերուած առակով, որ կարծես յատուկ դրամի եւ ունեցուածքի վազքով տարուածների համար է: Հին հռոմէացիները յայտնի համեմատութիւն ունէին՝ «Դրամը ծովի ջրի պէս է»,որ որքան խմես, այնքան աւելի կուզես: Յիսուս օրինակ է բերում առատ բերք ստացած եւ այդ բերքով ամբողջ կեանքը հանգիստ ուտել եւ խմել ծրագրող հարուստի մասին, որին չեն յետաքրքրում ո՛չ այլ մարդիկ, ո՛չ Աստուած: Արդիւնքը հասկացւում է կրկին ժառանգութեան մասին խօսքով. «*Անմի՛տ, հէնց այս գիշեր հոգիդ քեզնից պահանջելու են, իսկ ինչ որ պատրաստել ես, ո՞ւմն է լինելու*»:

Քանի~ հայ սերունդներ են աղօթական կռիւ տուել Աստծոյ հետ իրենց հայրական եւ հայրենական ժառանգութեան չստանալու համար: Հայ մտաւորականը դարերով մեղադրանք է կարդացել հայ մեծահարուստին դրամի եւ իշխանութեան խելագար վազքի մէջ ընկնելու եւ ազգակիցներին ու հաւատակիցներին անօգնութեան մէջ թողնելու համար: Վկան Չամչեան պատմիչը, որ խօսում է Պոլսի հայ սեղանաւորների՝ պաշտօնների համար մրցակցելու եւ Բարձր Դռանը տրուած կաշառքների ահռելի չափերի
մասին կամ թէկուզ Բաքուի հարուստներին դիմած եւ անարձագանք մնացած Անդրանիկ զօրավարը, որ մէկ ոսկիով մէկ որբ գնեց: Դա Աստծուն ուրանալու տեսակ է, մամոնայի պաշտամունք, որի մասին առաքեալը գրում է. «*Դէ՛ն գցեցէք …յոռի կրքեր, չար ցանկութիւն եւ ագահութիւն, որ կռապաշտութիւն է*» (Կող. 3:5): Այդ ինքամոռաց դրամական վազքի դէմ է խօսում Քրիստոս՝ յիշեցնելով աղքատի, քաղցածի, անտունի, պանդուխտի, հիւանդի ու

բանտարկեալի մասին, նրանց կերպարի միջոցով գալով մեզ: Փառք Աստծոյ, որ ամէն բանի մէջ ծայրայեղ հայի տեսակը անտարբեր ու եսասէր հարուստների այս գունդից զատ մեծազնիւ ու նուիրական կերպարներ ունի, որոնք Աստծոյ տուածը կիսելու, տալու, նուիրելու, բաշխելու օրինակ են տուել: Հայտնի բանաստեղծի խօսքը կա՝ **ինչ որ ուրիշին տուեցիր, այն է քոնը**: Եթէ մենք իբրեւ ապրող քրիստոնեաներ լինէինք միշտ, ապա ամէն մի հայ քրիստոնեայ սիրած կը լիներ միւսներին ինչպէս մերձաւոր եւ եղբայր՝ սիրտ ու սէր կիսելով այլոց հետ, քանի որ այդ սիրոյ մէջ է գոյում Սէր-Աստուած: Քրիստոս այսպիսի զոհաբերուող սիրոյ օրինակ տուեց խօսքով ու գործով: Կարեւոր է մեզ համար սրանից բղխող որոշումը.

ա/Չլինել եսասէր եւ անձնապաշտ այն մեծահարուստի պէս, որ միայն իր եւ միայն այս կեանքի մասին էր մտածում՝ ասելով. «*Ո՛վ մարդ, շատ տարիների համար ամբարուած բազում բարիքներ ունես, հանգի՛ստ արա, կե՛ր, խմի՛ր եւ ուրա՛խ եղիր*» (Ղուկ. 12:19):

բ/Փնտրել Աստծոյ արքայութիւնը, որ Քրիստոսի փրկագործութեանը հաւատալու եւ այնպիսի կեանք ապրելու ջանքն է, որ մարդ երկրի վրա կատարի Աստծոյ կամքը, ինչպէս երկնքում է: «*Դուք հետամո՛ւտ եղէք Աստծու արքայութեանը, եւ այդ ամէնը աւելիով կը տրուի ձեզ*» (Ղուկ. 30-31):

գ/Իբրեւ հետեւանք այդ ջանքի՝ սովորութիւն դարձնել ունեցած թէկուզ քչից բաժին հանել, կիսել եւ տալ ուրիշներին սիրով, ինչի արդիւնքում Աստծոյ պատասխան խնամքն ու վարձատրութիւնը պիտի զգալի լինի այստեղ («*ձեր Հայրը գիտէ, որ այդ ամէնը պէտք է ձեզ*») եւ միաժամանակ չհնացող եւ չժանգոտող գանձերը երկնքում: դ/Քրիստոսին գաղափարից կեանք բերել՝ Իր պատուիրանները ապրեցնելով մեր ընտանիքներում, հասարակական մեր կեանքում եւ պետականաշինութեան մէջ՝ ժառանգութիւն թողնելով ոչ միայն նիւթական հող եւ երկիր, այլ այդ նիւթին արժէք տուող հոգեւոր եւ բարոյական «գանձերը»

Անհատական եւ ազգային մեր խնդիրները, մեր նախնիներից հաւատով, արիւն-քրտինքով պահած եւ մեզ թողած նիւթական եւ հոգեւոր ժառանգութեանը տէր կարող ենք լինել, եթէ քրիստոնէական սիրով սիրենք իրար, պահենք բարոյական եւ հոգեւոր մաքրութիւնը, առանց որոնց զուտ նիւթական տարածքը կրովանդակազրկուի, մեր աչքում անարժէք կը դառնայ՝ համեմատութեամ աւելի բարեբեր հողերի եւ առաւել հարուստ երկրների:

Յիշենք հօր ժառանգութիւնը անառակութեան վրայ վատնած անբարոյ որդուն, յիշենք հարստութեան պատճառով Յիսուսից տրտմութեամբ բաժանուող հարուստ երիտասարդին եւ առաւել սիրենք մեր հոգեւոր ժառանգութիւնը: Մեզ ուղղուած դիտենք Քրիստոսի պատասխանը, երբ առաքեալը հարց տուց անձը ուրանալու եւ Սէր-Աստծոյ հետեւից գնալու մասին. «*Եւ ամէն ոք, որ թողել է տուն կամ եղբայրներ, կամ քոյրեր, կամ հայր, կամ մայր, կամ կին, կամ որդիներ, կամ ագարակներ՝ իմ անուան համար, հարիւրապատիկ պիտի ստանայ եւ յաւիտենական կեանքը պիտի ժառանգի*» (Մատթ. 19:29):

Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

- By Hasmik and Lusine Hagopyan, Natalie and Veronika Mkrtchyan, and Hasmik and Yura Minasyan, Marine Sargsyan for the souls of their Mother who was also a loving Grandmother and Aunt the late **RUZANNA SARGSYAN** on the 40th day memorial of her passing. Also for all the old and newly departed members of the **HAGOPYAN**, **MKRTCHYAN**, **MINASYAN** and **SARGSYAN** Families.

- By Vigen, Leana and Adreneh Andreasian, Vacheh, Ani , Christopher & Christinah Andreasian, Carol, Arin & Arlen Telimi Andreasian , for the souls of their Mother who was also a loving Grandmother the late **SEDIK VARTKHATOON ANDREASIAN** on the 40th day memorial service of her passing, also for all the old and new departed members of the **ANDREASIAN** Family.

- By Rema & Bobina Khodagholian, Armo & Babgen Akanasyans, Preny, Martin, Lina and Valod Hovanessian and their families for the soul of their Mother who was also a loving Grandmother the late **LOSIK MARKARIAN SAVARANI** on the 40th day memorial of her passing, and Father who was also a loving Grandfather the late **ISKANDAR KHODAGHOLIAN** on the 26th anniversary of his passing, also for all the old and newly departed members of **KHODAGHOLIAN**, **AKANASYANS**, **HOVANESSIAN** and **MARKARIAN** Families.

- By Zvart Kareyan and Family for the soul of their Parents who were also a loving Grandmother and Grandfather the late **ANAHIT KAREYAN** on the 32nd anniversary of her passing and **KHACHIK KAREYAN** on the anniversary of his passing, also for all the old and newly departed members of **KAREYAN** Family.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.
Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

General

St Yeghiche Armenian Church is here to cater for all of your spiritual needs
Baptisms, Weddings, Baby Blessings, Home/Workplace Blessings, Seniors' Visitation, Hospitals/Home Visitation/Prayer, Funeral Service, Requiem, Grave Site Prayers, and more..

Please contact members of the Parish Council at Church every Sunday to request any of the above services. Alternatively, call Tel: 020 73738133 office, or write to Email: serices@styeghiche.org.uk

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan on 07548 777 147.

Hokehankist Requests: To request a requiem service and include details in our Sunday Bulletin, please contact us ***before Thursday Evening.*** Please contact Mr Viken Haladjian, or approach a mem-ber of Parish Council at church every Sunday after Badarak.
Tel: 020 7373 8133 office, 07970 146 280 mobile Email: services@styeghiche.org.uk

In Liu of Flowers: Friends and family of the deceased can make donations, in memory of their loved ones, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund.

Donations for prayers and annual membership contributions, in support of church's annual expenses, are welcome. Donations can be made;
-By a cheque made payable to "St Yeghiche Armenian Church Parish",
-By electronic bank transfer to "St Yeghiche Armenian Church Parish Ltd"
HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26
-By electronic card reader at the Church entrance.
-By QR Code directly to the Church PayPal or SumUp accounts.

PayPal Scan. Pay. Go.

Scan to Pay

St Yeghiche Armenian Church is a UK Registered Charity, Reg No 1173403.
Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.

Membership: St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk